«Հայաստանի շախմատի ակադեմիա»

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

Հետազոտական աշխատանք

ԹԵՄԱ՝ Ուսուցչի առարկայական և մասնագիտական գիտելիքների ու հմտությունների կատարելագործումը ստեղծագործական և հետազոտական աշխատանքների ընթացքում

ԱՌԱՐԿԱ՝ Շախմատ

ՀԵՂԻՆԱԿ՝ Սվետլանա Սարգսյան

ՄԱՐԶ՝ Արմավիր

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ՝ «Տանձուտի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վահան Սարգսյան

ԵՐԵՎԱՆ 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ներածություն……..…..3
2. Հետազոտության հիմնախնդրի հիմնավորում……..4
3. Հետազոտության նպատակը և հետազոտական հարցերը……4
4. Գրականության վերլուծություն…….5
5. Հետազոտության ընթացքը և մեթոդները……..8
6. Էմպիրիկ հետազոտություն…..……9
7. Եզրակացություն……..……..12
8. Գրականության ցանկ……..…13

Ներածություն

Մրցունակ կրթության համակարգի ձևավորման հիմքերից են որակյալ հանրակրթության կազմակերպումն ու իրականացումը: Ներկայումս ՀՀ-ում հանրակրթության ոլորտի և ուսուցիչների մասնագիտական գործունեության նկատմամբ փոփոխվող պահանջները պայմանավորված են ՀՀ կառավարության կողմից որդեգրված որակյալ կրթություն ապահովելու նպատակադրմամբ: Հանրակրթական ուսումնական հաստատությունն ապահովում է հիմնարար այն գիտելիքների պաշարը, որն անհատը պետք է համալրի ու կիրառի իր ողջ կյանքի ընթացքում: Այն նպաստում է ազգային ու համամարդկային արժեքներ կրող անհատի և քաղաքացու ձևավորմանն ու նրա համակողմանի և ներդաշնակ զարգացմանը: Ուստի կարևորվում են այս ոլորտում մրցունակ մասնագետների առկայությունն ու արդյունավետ մանկավարժական գործունեության իրականացումը: Ուսուցչի մասնագիտական գործունեությամբ բարդությունն ու բազմակողմանիությունը, այդ գործունեության շրջանակներում տեղի ունեցող փոփոխություններն ու զարգացումները, ինչպես նաև հանրակրթության որակի նկատմամբ ներկայացվող մշտափոփոխ պահանջները պայմանավորում են ուսուցիչների շարունակական մասնագիտական զարգացման կարևորությունն ու դրան առնչվող հիմնահարցերի խորքային ուսումնասիրությունը: Հետազոտության արդիականությունը պայմանավորված է ՀՀ-ում հանրակրթության ոլորտի լայնածավալ բարեփոխումներով, մասնավորապես «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի լրամշակմամբ, Հանրակրթության պետական չափորոշչի ձևավորմամբ ու հաստատմամբ (2021թ.), ուսուցիչների վերապատրաստման և ատեստավորման գործընթացներում տեղի ունեցող բարեփոխումներով, ինչպես նաև կրթության որակի նկատմամբ բոլոր շահակիցների տարաբնույթ պահանջմունքներով:

Բանալի բառեր: Կրթական բարեփոխումներ, հանրակրթության որակ, ուսուցչի մասնագիտական գործունեություն, ուսուցչի մասնագիտական զարգացում, ուսուցչի վերապատրաստում, ուսուցչի կոմպետենցիաներ:

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

ՀՀ-ում ուսուցիչների շարունակական մասնագիտական զարգացման հիմնախնդիրների անդրադարձը պայմանավորված է հանրակրթության նոր չափորոշիչների մշակմամբ ու ներդրմամբ, աշակերտների կրթական պահանջմունքների փոփոխություններով, հանրակրթական ուսումնական հաստատությունների և ուսուցիչների հաշվետվողականության նկատմամբ ներկայացվող հարափոփոխ պահանջներով: Կարելի է ենթադրել, որ մասնագիտական զարգացումն ուսուցիչների մասնագիտական գործունեությունը շարունակելու և դրա արդյունավետությունը բարձրացնելու հիմնարար միջոցներից է: Դա է պատճառը, որ հանրակրթության ոլորտի բարեփոխումների համատեքստում արծարծվող առանցքային հիմնահարցերը վերաբերում են ուսուցիչների առարկայական և մասնագիտական գործունեությանն ու մասնագիտական զարգացման գործընթացի կատարելագործմանը:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ

Հետազոտության նպատակն է, ուսումնասիրել ուսուցչի մասնագիտական կատարելագործման և զարգացման ուղիները՝ ստեղծագործական և հետազոտական աշխատանքների միջոցով:

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

1. Ինչո՞ւ է անհրաժեշտ ուսուցչին լինել ստեղծագործող:
2. Ի՞նչ կարող է տալ հետազոտական գործունեությունը և ինչպե՞ս կարող է օգնել ուսուցչի մասնագիտական գործունեությանը:
3. Հետազոտությունը շախմատում և շախմատը հետազոտության մեջ, ինչպիսի՞ փոխներգործություն կա:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

1. Ինչպես ցանկացած մասնագիտական գործունեություն, ուսուցչի աշխատանքը ևս բովանդակային, կառուցվածքային և գործառութային մշտական վերլուծության կարիք ունի: Մանկավարժական գործունեությունն ունի հստակ նպատակներ, շարժառիթներ, դրդապատճառներ, գործողություններ, գործառույթներ, գործունեություն իրականացնելու պայմաններ, եղանակներ, միջոցներ, օբյեկտիվ և սուբյեկտիվ ազդեցության գործոններ: Այսօր ժամանակակից դպրոցին հասարակությունը առաջադրում է նոր պահանջներ,որոնց իրագործման համար անհրաժեշտ են որոշակի պայմաններ և որակյալ ուսուցիչներ: Ուսուցչի աշխատանքը ստեղծագործական է և այդ պատճառով չունի հստակ ամրագրված նորմատիվներ, քանի որ հաճախ պայմանավորված է լինում՝

- Իրադրությունից բխող գործողություններով;
- Նոր հակազդեցությունների առաջացման հնարավորություններով;
- Ստեղծագործական մտահղացումներով;
- Երեխայի հոգեֆիզիկական մեխանիզմներին առաջադրվող պահանջներով, գործողությունների բարդությամբ և բազմազանությամբ:

Ուսուցիչն իր մասնագիտական պարտականությունները կատարելիս մշտապես գտնվում է ստեղծագործական մթնոլորտում: Տիրապետելով փորձի, գիտելիքի, ինչպես նաև դրանք ձեռք բերելու միջոցներին, աշխատանքի հնարներին և մեթոդներին՝ ուսուցիչները տարբեր օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով չեն ձևակերպում և ամրագրում ամենօրյա աշխատանքի ընթացքում իրենց կատարած բացահայտումներն ու «հայտնագործությունները»[1]:

2. Մանկավարժական մասնագիտական գործունեության հետազոտությունը խթանում է ուսուցչի ազատությունը: Այն գործընթաց է, որը յուրաքանչյուր ուսուցչի հնարավորություն է տալիս փնտրել, ընտրել և ամրագրել ուսուցման արդյունավետությանը նպաստող ցանկացած գործողություն: Սա ենթադրում է՝ խրախուսել ուսուցիչներին հետազոտություններ կատարելու այն դասարաններում և դպրոցներում, որտեղ դասավանդում են: Երբ մանկավարժներն իրենք են կատարում հետազոտություններ, նրանք այդ կերպ հնարավորություն են ստանում կատարելագործելու իրենց մասնագիտական գործունեությունը՝ փոխկապակցվում են ազատության և արդյունավետության արժեքները: Երբ ուսուցիչը որևէ աշխատանք է պլանավորում, մշակում կամ փորձում գործնականում այն կիրառել, նա, մտածելով անցյալում իրականացրած գործողությունների մասին, թե ինչ արդյունք է տվել կամ արդյունքում ինչ հետևանքներ են եղել, փորձում է կատարելագործել իր հետագա քայլերը: Սեփական գործունեությանն անդրադարձ կատարելը կարևորող

[1]«Ատեստավորման ենթակա ուսոցչին վերապատրաստող երաշխավորված կազմակերպությունների ցանկի ձևավորման կարգը հաստատելու մասին» ՀՀ ԿԳՄՍ նախարարի N 24-Ն հրաման (ընդունված 05.03.2021):

մանկավարժներն իրենք իրենց հարց են տալիս, մասնավորապես՝ «Ի՞նչպես եմ ես աշխատում», «Արդյո՞ք իմ ընթացիկ աշխատանքը համապատասխանում է իմ և սովորողների նպատակներին», «Արդյո՞ք անում եմ այն, ինչի կարիքն ունեն աշակերտները», «Արդյո՞ք իմ գործունեությունը կարող է ուրիշների համար ընդօրինակման նմուշ հանդիսանալ», «Ինչպիսի՞ ռազմավարական փոփոխություններ կարող են ինձ օգնել հասնել ու իմ մասնագիտական նպատակներին», «Ի՞նչ փոփոխություններ են անհրաժեշտ իմ մասնագիտական վարքում»:

Այսպիսով, ուսուցչի կողմից սեփական մասնագիտական գործունեության հետազոտությունն առաջին հերթին իրադրական է: Այն կիրառվում է կոնկրետ իրավիճակում խնդիրների բացահայտման ու լուծման նպատակով: Մանկավարժական մասնագիտական գործունեության հետազոտության նպատակը ուսուցչի կողմից սեփական աշխատանքը քննելու, վերլուծելու միջոցով բարելավելը, զարգացնելը, արդյունավետությունը բարձրացնելն է և, իվերջո, փոփոխելը:

3. Շախմատը, որպես պարտադիր ուսումնական առարկա, դպրոցում ընդգրկվել է 2011թ-ից Հայաստանի շախմատի ակադեմիայի և ԿԳՆ-ի սերտ համագործակցությամբ: Գաղափարի հեղինակը՝ Շախմատի ակադեմիայի նախագահ և Շախմատի ֆեդերացիայի նախագահի առաջին տեղակալ Սմբատ Լպուտյանն է: Շախմատը դասավանդվում է երկրորդից չորրորդ դասարաններում: Շախմատն ինքնին հետազոտություն է: Այն ամբողջությամբ խնդիրների վրա կառուցված հետազոտություն է:

«Շախմատ» առարկայի ուսուցումը տարրական դպրոցում ունի կրթական մեծ ներուժ, որը պայմանավորված է հետևյալ առանձնահատկություններով.

- շախմատը նպաստում է սովորողների տրամաբանական մտածողության զարգացմանը;
- շախմատում զարգացվում և կատարելագործվում են սովորողի երևակայությունը, վերլուծական կարողությունները՝ դրանով իսկ նպաստելով ուսումնական մյուս առարկաների արդյունավետ ուսումնասիրմանը;
- շախմատում դրսևորվում է նպատակին հասնելու համար հետևողական և քրտնաջան աշխատանքի անհրաժեշտությունը, որը նպաստում է աշակերտի հոգևոր աշխարհի ձևավորմանը;
- շախմատը, պարունակելով գիտության, արվեստի և սպորտի տարրեր, աշակերտի մեջ զարգացնում է ինքնուրույն աշխատանքի միջոցով հաջողությունների հասնելու կարողություններ:

Արվեստի առումով այն զարգացնում է աշակերտի ճաշակը, գեղեցիկն ընկալելու և գնահատելու կարողությունները: Սպորտի տեսանկյունից շախմատը զարգացնում է

աշակերտի կամային որակները, մինչև վերջ պայքարելու, օբյեկտիվ լինելու, ճիշտ գնահատելու, ինչպես նաև արժանապատիվ պարտվելու կարողությունները: Շախմատը նպաստում է նաև աշակերտի ինքնադրսևորմանը, բարդ իրավիճակներում կողմնորոշվելու կարողությունների ձևավորմանը: Վերոնշյալ առանձնատակությունների շնորհիվ շախմատը ձեռք է բերում եզակի կրթական նշանակություն: Ելնելով վերոնշյալից՝ պահանջ առաջացավ շախմատը ներառելու տարրական դպրոցի ուսումնական պլանում:

Շախմատի ուսուցումն ունի նաև իր ուսումնական նպատակները, այն է՝

- ձևավորել և զարգացնել աշակերտի մտավոր կարողությունները,
- ձևավորել և զարգացնել աշակերտների ինքնակազմակերպման և ինքնուրույն գործունեության կարողություններն ու հմտությունները;
- զարգացնել աշակերտի ուշադրությունը, երևակայությունը, կամքի ուժը, աշխատասիրությունը, նպատակասլացությունը, համբերությունը;
- զարգացնել աշակերտի հիշողությունը;
- բացահայտել շախմատային օժտվածությամբ երեխաների:

Որպես հանրակրթության պարտադիր բաղադրիչ՝ շախմատ առարկան ունի իր դասավանդման հիմնասկզբունքները, որոնք ուղեցույցի դեր են կատարում շախմատ դասավանդող ուսուցիչների համար՝ ապահովելու ինչպես թույլ և միջին, այնպես էլ ուժեղ կարողությունների տեր երեխաների ուսուցումը՝ համաձայն նախօրոք հաստատված ուսումնական պլանի:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ ԵՎ ՄԵԹՈԴՆԵՐԸ

Գիտական վարկածի հաստատման նպատակով կիրառվել են գիտահետազոտական մեթոդներ՝

1. տեսական վերլուծության և համադրման մեթոդներ, որոնց շնորհիվ բացահայտվել են հետազոտության հիմնախնդրին վերաբերող մանկավարժական, հոգեբանական հայեցակարգերը;
2. էմպիրիկ հետազոտության մեթոդներ՝ դիտում,զրույց (անհատական, խմբային), ուսուցիչների գործունեության արդյունքների վերլուծություն։

Սույն հետազոտությունն իրականացվել է որակական և քանակական մեթոդների համադրմամբ։ Որակական հետազոտության մեթոդներ ընտրվել են խորացված հարցազրույցը և ֆոկուսխմբային քննարկումների մեթոդները։ Քանակական հետազոտությունն իրականացվել է ստանդարտացված հարցազրույցի մեթոդով[2]։ Ուսումնասիրվել են նաև թեմային վերաբերող հետազոտությունները և միջազգային հրապարակումները։ Անցկացվել է հարցում դպրոցների 2-րդ, 3-րդ և 4-րդ դասարանների սովորողների շրջանում։ Հարցում է անցկացվել Արմավիրի մարզի դպրոցների շախմատի ուսուցիչների շրջանում։ Անցկացվել է խորացված հարցազրույց կրթության ոլորտի 10 փորձագետների շրջանում, որոնք ներկայացնում են պետական համակարգը, միջազգային և հասարակական կազմակերպությունները, դպրոցները։ Հետազոտության փուլերում ուսումնասիրվել են ուսուցիչների անձնային և մասնագիտական որակներին ներկայացվող պահանջների, մասնագիտական զարգացման վերաբերյալ փիլիսոփայական, հոգեբանամանկավարժական գրականությունը։ Հետազոտության փուլում որոշվել է ուսուցչի մասնագիտական գործունեության կատարելագործման սկզբունքները, իրականացվել են փորձարարական աշխատանքներ։ Անցկացված հետազոտության և փորձարարական աշխատանքների արդյունքների հիման վրա կատարվել են հետազոտության նյութերի համակարգում[3]։

[2]Հակոբյան Ֆ., Ուսուցիչների մասնագիտական զարգացման առանձնահատկություններն ու արդյունավետության բարձրացման ուղիները ՀՀ կրթության համակարգում, «Բանբեր Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի. Մանկավարժություն և հասարակական գիտություններ», Երևան, «Լինգվա», 2020 :

[3] Դպրոցական կրթության հասանելիությունը Հայաստանում, Երևան, 2012

ԷՄՊԻՐԻԿ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ

Անցկացվել է հարցազրույց Հայաստանում դասավանդող շախմատի 10 ուսուցիչների հետ: Հարցման նպատակն էր պարզել, թե ուսուցիչները որքանով են պատրաստ հարստացնելու իրենց գիտելիքները և հմտությունները: Հարցազրույցները նպատակ ունեին նաև պարզելու հետազոտական գործունեության ազդեցությունը ուսուցիչների մասնագիտական կարողությունների վրա:

Հարցազրույցի հարցեր

1.Հետազոտական աշխատանքի միջոցով ուսուցչի ո՞ր հմտություններն են զարգանում:

Եթե մեկ նախադասությամբ ձևակերպելու լինենք պատասխանների արդյունքները, ապա կստանանք այսպիսի պատկեր. հետազոտական աշխատանքի արդյունքում զարգանում են գործողությունների պլանավորման, երևույթները համեմատելու, գնահատելու, վերլուծելու և համադրելու, մտքերը հստակ ձևակերպելու, մարդկանց հետ հաղորդակցվելու, ստեղծագործելու հմտությունները:

2.*Ի՞նչն է ձեզ մոտիվացնում, որ կատարեք ստեղծագործական աշխատանք:*

Շատ ուսուցիչներ որպես մոտիվացնող գործոն են մատնանշել ինքնակատարելագործումը: Իսկ մի շարք ուսուցիչներ էլ ուսումնական գործընթացը ավելի հետաքրքիր դարձնելու համար կարևորել են նոր մեթոդների, հնարքների, թեմաների մշակումը: Նորարարական մոտեցումները, կարծում ենք, նույնպես կարելի է որակել իբրև ինքնակատարելագործման դրսևորում: Հարցվող ուսուցիչներից մեկն էլ որպես մոտիվացնող գործոն է համարել իր սաների և աշակերտների ստեղծագործական առաջընթացը:

3.Մասնագիտական կատարելագործման ի՞նչ քայլեր եք ձեռնարկում:

Այս հարցի շուրջ հնչած պատասխանները պայմանականորեն կարելի է բաշխել երեք խմբերի միջև

- *<u>Ինքնակրթություն</u>* (Մասնագիտական և վերլուծական գրականություն (գրքեր, ամսագրեր, թերթեր), համացանցի նյութեր, եթեր, մամուլ, հետազոտական և ստեղծագործական գործունեություն, հեղինակային նյութերի հրապարակում մամուլի էջերում Համագործակցություն);
- *<u>Սեմինարներ</u>* (գիտաժողովներ, խորհրդակցություններ, վերապատրաստման դասընթացներ, ատեստավորում);
- *<u>Համագործակցություն</u>* (Միջառարկայական համագործակցություն դպրոցների ուսուցիչների միջև, փոխայցելություններ տարբեր

դպրոցների ուսուցիչների միջև՝ փոխադարձ դասալսումների և համատեղ քննարկումների նպատակով:

4.Մարդկային ի՞նչ որակներ է խթանում հետազոտական աշխատանքը:

Ըստ հարցվողների՝ զարգացնում է հետևյալ որակները. Կամք, պատասխանատվություն, նպատակասլացություն, աշխատասիրություն, անաչառություն, համբերատարություն, հաստատակամություն, համառություն:

5.Ուսուցչի կատարելագործման առումով ի՞նչ առավելություններ ունի հետազոտական աշխատանքը ստեղծագործական գործունեության մյուս տեսակների համեմատ:

Եթե ընդհանրացնելու լինենք տեսակետների ամբողջությունը, ապա կտեսնենք, որ հետազոտական գործունեությունը կայուն, մնայուն, հիմնարար, երկարաժամկետ օգտագործման համար պիտանի գիտելիքների աղբյուր է հանդիսանում:

6.Ո:րն է այն ամենակարևոր ստեղծագործական ձեռքբերումը, որ ունեցաք հետազոտական աշխատանքի արդյունքում:

Ուսուցիչների պատասխանները խորիմաստ և բազմազան էին (երեխաների կրթական կարիքները հստակորեն բացահայտելու և սահմանելու հմտություն, ինքնակրթություն՝ որպես ստեղծագործական և առարկայական գիտելիքների ձեռքբերմանը նպաստող երևույթ, կրտսեր տարիքային խմբի երեխաների հետ աշխատելու հմտություններ): Սակայն շրջանառվող առանցքային գաղափարը այն էր, որ հարցվողների զգալի մասը իրենց բացահայտեցին հետազոտող ուսուցչի դերում: Պարզվեց, որ հետազոտողի ջիղը այս կամ այն չափով առկա է գրեթե բոլոր հետազոտողների մոտ:

7.Ի՞նչ տվեց ձեզ այս հետազոտությունը ինքնաճանաչողության առումով:

Ինքնաճանաչողությունը առավել հաճախ ընկալվում է որպես սեփական թերությունները բացահայտելու ճանապարհ: Մինչդեռ հարցման մասնակիցների մեծ մասը նշեցին իրենց մեջ թաքնված հնարավորությունների, ընդունակությունների, մեծ ներուժի, մեծ կարողությունների բացահայտման մասին՝ չմոռանալով ավելացնել, որ ինքնակատարելագործումը անվերջանալի գործընթաց է:

8.Համագործակցության ի՞նչ ձևեր պետք է կիրառել, որպեսզի հետազոտությունը արգասաբեր լինի ուսուցչի հետագա մասնագիտական գործունեության համար:

Իբրև համագործակցության առանցքային ձև նշվեց փորձի փոխանակումը՝ իր բոլոր դրսևորումներով. սեմինար խորհրդակցություններ, ուսուցիչների միջառարկայական կապերի ամրապնդում և ընդլայնում: Սակայն ուսուցիչների մասնագիտական որակների բարելավման ամենաազդեցիկ և գործուն միջոց

համարվեց դասալսումը՝ լինի դա գործընկերների փոխայցելությունների տեսքով, թե հանրակրթության համակարգի փորձագետների ստուգայցերի տեսքով: Դասալսումը կարևոր է այն իմաստով, որ պրակտիկ մթնոլորտում է հղկվում ուսուցչի աշխատանքային հմտությունը՝ մանավանդ դասալսումներից հետո ծավալվող քննարկումների, բանավեճերի համապատկերին: Այսպիսով, ուսուցիչների մոտ հակվածություն կա համագործակցությամբ ամրապնդել հետազոտության շնորհիվ ձեռք բերված գիտելիքներն ու հմտությունները: Առկա է դասավանդման նոր մոտեցումներ ձեռք բերելու ձգտում՝ այդ նպատակի համար օգտագործելով բազում ձևեր և միջոցներ:

Ուսուցիչները ամենատարբեր եղանակներով փորձում են հարստացնել իրենց գիտելիքներն ու զարգացնել հմտությունները: Հարցվածների մեծ մասը պատկերացում ունի թե ինչ է հետազոտական աշխատանքը, իսկ նրանցից ոմանք իրենց արդեն զգում են հետազոտողի կարգավիճակում: Հետազոտական աշխատանքը տալիս է կայուն և հիմնարար գիտելիքներ, բարենպաստ ազդեցություն է թողնում ինչպես մասնագիտական, այնպես էլ մարդկային որակների վրա: Հետազոտությունը նպաստում է ինքնակատարելագործմանը: Հետազոտության արդյունքում ուսուցիչները բացահայտում են իրենց թաքնված ներուժը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հետազոտության արդյունքում հանգեցի այն եզրակացության, որ որուսուցչի մասնագիտական զարգացումն արդի կրթական պահանջների արտացոլանքն է, որում մանկավարժական կոմպետենտությունը սահմանվում է որպես ուսուցչի գիտելիքների, կարողությունների, իրազեկությունների և մասնագիտական պատրաստվածության մակարդակ, ինչը հնարավորություն է տալիս արդյունավետորեն գործել փոփոխվող սոցիալական, մշակութային և մասնագիտական իրավիճակներում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. «Ատեստավորման ենթակա ուսուցչին վերապատրաստող երաշխավորված կազմակերպությունների ցանկի ձևավորման կարգը հաստատելու մասին» ՀՀ ԿԳՄՍ նախարարի N 24-Նհրաման (ընդունված 05.03.2021):

2. Հակոբյան Ֆ., Ուսուցիչների մասնագիտական զարգացման առանձնահատկություններն ու արդյունավետության բարձրացման ուղիները ՀՀ կրթության համակարգում, «Բանբեր Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի. Մանկավարժություն և հասարակական գիտություններ», Երևան, «Լինգվա», 2020 :

3. Դպրոցական կրթության հասանելիությունը Հայաստանում, Երևան, 2012